

այս բանը յայտնեցէք մեր բարեկամներին“:

Այսօր Ռուսաստանի և Ֆրանսիայի դաշնակցութիւնը դրոշմաձ է ուստի և Ֆրանսիացու արիւնով: Ներեցէք, որ իմ խօսքերն եմ յիշում, փոխանակ յիշելու այն բոլորը, ինչ խօսում էին այն ժամանակ ամենքը, որոնց կրկնողութիւնն էր, որ ես արի պալատում: Այն, տասնևութ տարի անց, ինձ թւում է, որ մեզ հասկացան: Ռուսաստանը գիտէ, թէ ինչ է Ֆրանսիայի բարեկամութեան արժէքը, և գիտէ նոյնպէս, թէ ինչ են նրա պարտականութիւնները: Երբ կայսրը երէկ կոչ արեց մեզ պաշտպանելու Սերբիան, որին սպառնում էր ամբողջ գերմանական դանդաժը, երբ նա հրատարակեց իր վեհանձն կոչը Լեհաստանին, և երբ վաղը, առանց վրդովելու թիւրքերի խելակորոյս գրոհից, նա լսելի կը դարձնէ Հայաստանին, Տրապիզոնից մինչև Ադանա և Ալէքսանդրեա, յունական կղզիներին և Իզմիրին, ազատագրման և ազատութեան միևնոյն կոչը, ինձ թւում է, թէ Ռուսաստանը կը դառնայ մեզ և կը հարցնէ. „Ֆրանսիացիներ, գո՞հ էք“:

(Հորիզոն).

ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*).

2.

Ոգելից բմպելիբների գործածութիւնը մանաւանդ օգուտ տարածում է հայ գիւղերում և լեռնային շրջաններում գործ են ածում օղին, որը թէ էթան է թէ շուտ ազդող: Մեզ մօտ՝ ճմարիտ է այնքան չի տարածում ոգեմոլութիւնը, ալկոհոլիզմ, որը յայտնի հոգեբոյժ պրօֆ. Բեխտերևը համարում է հիւանդութիւն, որ սարսափելի քայքայիչ հետևանք ունի թէ խմողի կազմուածքի և թէ նրա սերնդի վրայ. բայց դժբախտաբար մեզ մօտ արդէն սկսում է երևալ ալկոհոլիզմը, թէև նուազ չափով: Հոշակաւոր պրօֆ. հանգուց. Չախարինը (Захаринъ) ասել է. «Երբ մտածում եմ ազգային արբեցողութեան մասին, Ռուսաստանի ապագան ինձ սարսափելի է երևում»: Վերոյիշեալ գիտնական Բեխտերևը իւր մէկ գրուածքում գրում է. «Համաձայն ամերիկական վիճակագրութեան երեխայ յանցաւորները ծնուել են ոգեմոլ ծնողներից՝ տալով 47<sup>0</sup>/<sub>0</sub>, անգլիացիները 43,5<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ՝ ընկնաւորներ, էպիլեպսիա. 49,5<sup>0</sup>/<sub>0</sub>»: Ալկոհո-

\*) Տես Արարատ 1914, հոկտեմբեր:

լիզմի դէմ նա առաջարկում է՝ ի միջի այլոց՝ մտցնել բժշկական վկայական պսակի ժամանակ: Բազմաթիւ յայտնի գիտնականներ, գլխաւորապէս հոգեբոյժներ՝ ապշութիւնը, խելագարութիւնը, ընկնաւորութիւնը, յանցագործութիւնը ևլն. կապում են ծնողների ոգեմոլութեան հետ. խելագարութեան՝ 50<sup>0</sup>/<sub>0</sub> և ոճրագործութեան 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ը\*): Ինչպէս յայտնի է ներկայումս երեք հիւանդութիւններ համարվում են ամենամեծ չարիքը և պատճառ այլասեռման, սիֆիլիսը, տուբերկուլոզը և ոգեմոլութիւնը, որոնք ոչ միայն քայքայում են իրանց՝ հիւանդների կազմուածքը, այլ ժառանգաբար անցնում են նրանց սերնդին:

Նորերս ինձ պատմեց մի գիտակ անձնաւորութիւն, որ Ալալքալակի գաւառի գիւղերում արեցողութիւնը շատ մեծ ծաւալ է ստացել. նոյնը, նրա ասելով, կայ և միւս հայաբնակ գիւղերում. ապա ուրեմն մտածելու է օր առաջ, որ այդ վտանգաւոր ախտը արմատ չը ձգէ մեր տգէտ ազգաբնակչութեան մէջ: Այստեղ մենք քանիցս ականատես ենք եղել, թէ ինչպէս խեղճ հայ մշակները տեղիս գինեատներից դուրս են եկել բոլորովին հարբած, իրենց վաստակած կոպէկները թողնելով այդ զղուելի գինեատներում: Ի՞նչ պէտք է անել դրա դէմ. խօսքով և գրչով բացատրել ոգեմոլութեան սարսափելի վտանգաւորութիւնը. սահմանափակել օղետների թիւը, որտեղ կարելի է, նրանց փոխարինելով գոնէ թէյատներով ևլն: Մի փոքրիկ վիճակագրութիւն. (Срoвнит. таблица годов. потреб. спиртк. напитокoвъ въ 50<sup>0</sup>/<sub>0</sub> градусoвъ на 1 человекa по дан. Бельг. провительствa 1895 г.)

Ֆինլ.	Նորվեգ.	Անգլ.	Ռուս.	Ֆրանս.
2,0, լիտր. (1888 г.)	2,3 (1891)	5,40 (1800)	6,30 (1000)	8,74 (1800)
Գերմ.	Բէլգ. (1890—95)			
8,80 (1800)	9,55 լիտր.			

Ամենից շատ Բելգիա, ուր ազգաբնակչութիւնը 1870—1894 աճել է

	24 <sup>0</sup> / <sub>0</sub>
Յանցագործութիւնը աճել է	50 <sup>0</sup> / <sub>0</sub>
Նիւազնորներ	90 <sup>0</sup> / <sub>0</sub>
Ինքասպանութիւն	120 <sup>0</sup> / <sub>0</sub>
Աղքատներ և թափառաշրջիկներ	125 <sup>0</sup> / <sub>0</sub>

2. Օղէտներ և բանտեր Բէլգիայում

	1846,	1870,	1894.
Օղետներ	48,188	12,933	176,165
Բատի կալան.	2189	2672	3400

\*) Объективно психологич. методъ въ примѣненіи къ изученію преступности. проф. Бехтеревъ.

1 օղիտ. 90 բնակչի.

(1:90) (1:45) (1:36)

3. Տարուայ մահացութիւն ալկոհոլից:

	ազդարն.	մահ.	հարբ.	ծախս ալկ. վրայ.
Ռուսաստան	100,000,000	130000	1,3:1000	3 <sup>1</sup> / <sub>2</sub> միլիարդ
Անգլիա	40	50000	1,2:1000	2 <sup>1</sup> / <sub>2</sub> »
Գերմանիա	50	50000	1:1000	2 »
Ֆրանսիա	39	40000	1,2:1000	1 <sup>1</sup> / <sub>2</sub> »
Բելգիա	6,700 միլ.	4-5000	3,2:1000	

4. Ալկոհոլը քայքայում է երկիրը. Բելգիան ծախսում է տարեկան 60 միլ.:

Այդ 20,000 մշակի տներ արժէ

արժէ 3<sup>1</sup>/<sub>2</sub> միլ. փուտ միս.

20 միլ. քսակ գետնախնձոր,

500 միլ. կիլօգր. հաց.

Վարձն է 400,000 մշակի օրավարձ է:

Այդ աղիւսակները վերցրուած են պիրօզ. ընկերութեան տախտակներէ (ТАБЛИЦЫ), որոնք Կ. Բժ. Լ՛նկ. տրամադրութեան տակ են գտնուում ժողովրդական դասախօսութիւնների համար, մոզական լապտերով ցոյց տալու: Մի փոքր տեղեկութիւն ևս:

Սկսած 1837—1900 զանազան հեղինակներ բերել են նկարագրութիւն ոգեմոլների 1746 սերնդի. զբանցից 323 վախճանուել են մինչև ծնուելը, կամ իսկոյն, ծնուելուց յետոյ. 445 ջղային հոգեկ. հիւանդներ. 65 բարակացաւորներ, 548-ը յանցաւորներ, անառակներ և աղքատներ. և միայն 129-ը առողջներ\*):

Ի՞նչ կարելի է անել մեզ մօտ արբեցողութեան դէմ, որը տարածվում է արագօրէն, մանաւանդ լեռնային վայրերում, Ախալքալակ, Դարս ևլն. Շատ լաւ միջոց է Պիրօզ. Լ՛նկերթ. կազմակերպած միջոցով դասախօսութիւններ մոզական լապտերներով, ցոյց տալով ալկոհոլիզմի աղէտաբեր հետեանքները, նոյնպէս հրատարակել մատչելի լեզուով գրուածքներ, ինչպէս այդ անում են լուսաւոր երկրներում:

## Երկրորդ մաս.

### I.

Ինչպէս երևաց մեր գրուածքի առաջին մասից, մեր գիւղացին շատ անյաջող պայմանների մէջ է գտնուում. և եթէ նա աճում է, դա՛

\*) Алькоголизмъ «зверотденіе. привать доцента Вяземскаго.» Русск. Вѣдом. № 85 1910 г.

շնորհիւ լաւ կլիմայի, որովհետեւ տափաստանում նորա աճումը, թէ շատ չնչին է և թէ բացասական է: Որոնք են այն հիւանդութիւնները, որոնք յաճախ են հրկում նորա մէջ և որոնցից տուժում է:

Մեր գիւղացին շատ մեծ զոհեր է տալիս զանազան տարափոխիկ հիւանդութիւնների, ծաղիկի, քութէշի, տիփի ևն, վերջինը համարեա չի վերանում մեր գիւղերից, երբեմն հասնելով համաճարակի, տալով մեծ մահացութեան տոկոս:

Ծաղկից կոտորածը և վնասուածները—աչքի կուրութիւն 300/0, շատ մեծ են լինում մանաւանդ այն տեղերում, ուր ծաղկի պատուաստը չի տարածված բաւարար չափով, ինչպէս մեր գիւղերում:

Ծաղկի պատուաստը շատ անբաւարար է Տաճկահայաստանում և Կիլիկիայում: Նորերս Հորիզոնում տպուած էր մի հետաքրքիր յօդուած՝ ուր գրուած է հետեւեալը՝ «Էրզրումի նահանգում տարեկան ծնունդ՝ 16,456, որից 8,809 տղայ, իսկ 7,647-ը աղջիկ: Մահերի թիւը 9,448 որից 6,356 տղայ, իսկ 3072-ը աղջիկ: Այս վաղահաս մահերից զգալի տոկոսը ամեն տարի լինում է ծաղկից և այլ տարափոխիկ հիւանդութիւններից: Տեղեկագրի հեղինակը՝ Էրզրումի առողջապահակ. տեսուչը առաջարկում է պատուաստը տարածել լայն ձևով»: Հորիզոն, № 246, 1913 Էրզրումի նահանգի առողջապահ. վիճակը:

Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ 1876—81 զերման զօրքում ծաղկից վախճանուեց 306, Գաղ. զօրքում 23,400:

Թէ որ աստիճանի կարևոր է ծաղկի պատուաստը այդ կերևայ հետեւեալ վիճակագրութիւնից. 1889—1893 թ. մեռել էին իւրաքանչիւր միլիոնի վրայ հաշուած. Գերմանիայում տարին 572 հոգի. 2,3 (մէկ միլիոն ազգաբնակչութեան վերայ հաշուելով).

Դանիայում	14	3,8	մէկ միլիոն ազգաբ.
Շվեդիայում	32	1,3	( 100,000 բն.* )
Բէլգիայում	7779	252	1,0—0, 1:100,000
Ֆրանս.	5674	147,6	
Աւստր.	37037	313,6	1,0—0, 1:100,000
Իտալիայ.	24801	204	2,2: —
Ռուսաստ.	288,330	836,4	68,0:100,000 (1910 տ.)

Մահացութիւնը ծաղկից, կախուած է նրա տեսակից օրինակ՝ ծիրանագոյնը (рххруро vukiolosa) երբ ծաղիկը չի հասնում, թարախակալում—փրկութիւն չկայ. խառն ծաղիկ (слипч. оспа)—մեծ մահացութիւն, Մև ծաղիկ, արագ և մեծ մահացութիւն:

\*) Այդ վերջին տեղեկ. վերքը. են Всерос. гигиен. выст. 1913 г. въ С. Петербургѣ.

Ապացուցուած է՝ 1,2 պատուաստուածների մահացութիւնը 14,80/0—630/0:

2, պատուաստ. 130/0

3, կրկնապատուաստ 8,20/0

Միւս տարափոխիկ հիւանդութիւնները տալիս են մահացութեան ահադին տոկոս, մանաւանդ դիֆտերիտը, զոնթէշը, տիփը, մանաւանդ՝ բծաւորը (СЫПНОЙ) նորերս ապացուցուած է, որ տիփի գէժ յաջողութեամբ կարելի է կուել, որը ծաղումը և տարածումը ըստ Պետենկօփերի՝ արդէն թողնուած է, իսկ տիփի վարակման հիմնական աղբիւրը պէտք է ընդունել, որ մարդն է, որը արտահանում է (ВЫДѢЛЯЕТЪ) շրջապատող շրջանը տիփի բացիլներ: Ուրիմս հարկաւոր է կատարեալ ախտահանումն (ДЕЗИНФЕКЦИЯ) թէ բնակարանի, թէ հագուատի ևլն, ապացուցուած է, որ տնային ճանճերը տարածում են տիփի և նրա մէջ ապրում են կենդանի մանրէներ երկու շաբթից աւելի:

Տիփի բացիլներ տարածում են նոյնպէս մըջիւնները, տարականները, լուերը (БЛОХИ), ոջիլները, փայտոջիլները (КЛОПЫ): Վերջինը բացի տիփից տարածում է և տուրերկուլեոզ (ТУБЕРКУЛОЗЪ)—բարակացաւ, յիտադարձ տիփի: Մալարիայի մոծակները նոյնպէս տարածում են տիփի:

Ահա ինչու թէ բնակարանները, թէ հագուստեղէնը և թէ անկողինները պէտք է ախտահանել—կղկղանքը և մէզը խօրիան կրի միջոցով—ХЛОРИСТАЯ ИЗВЕСТЬ, ծծումբի այրումը բնակարաններում և ֆորմալինով հակահետում, շատ կարեւոր են. (ХИМИКЪ И ФОРМАЦЕВТЪ № 8, 1910 Դ. СТР.)

Տնային ճանճերը բացի տիփից, համարվում են տարածողներ և երեխայոց իրօլերայի (ДЕТЕК. ХОЛЕРА):

2. Նաք յաճախ է պատահում, մեր գիւղացոց մօտ բնամտիզմը յօդացաւ—բամին, որը բացատրվում է բնակարանների խոնաւութեամբ և գուրսը անձրևների տակ մնալուց, մանաւանդ, որ մեր գիւղացին տարուայ ամեն ժամանակներին համարեա միևնոյն հագուստն է ունենում: Եւ այդ հիւանդութիւնը աւելի է տարածուած կանանց սեռի մօտ, որովհետև վերջինը աւելի երկար է մնում խոնաւ բնակարաններում:

3. Չափազանց շատ են մորթու հիւանդութիւնները, մանաւանդ Լօսը, որից շատերն են տանջվում, մասնաւորապէս ձմեռ ժամանակ, երբ յաճախ ընտանիքների անդամներ միևնոյն անկողնում են քնում, որով և հեշտութեամբ վարակում են միմեանց:

Շատ են մորթու և ուրիշ հիւանդութիւններ. էկզիմա, պսօրեալիս ևլն, նոյնպէս գլխի վարակիչ դժուարաբուժելի մազերի հիւանդութիւնը, որը կոչվում է պարշա—ПАРША, դրանց պատճառը

գլխաւորապէս անմաքրութիւնից է, և բաղանիքների չգոյութիւնից և անպէտք կեղտոտ գլխարկից-փափախից, նոյնպէս և դալլաքների անմաքուր ածելուց ու մկրատից:

4. Ասամոսի եւ աղիքների հիւանդութիւնները ևս շատ են պատահում թէ մեծերի և թէ մանուկների մօտ: Վերջինները ամառ ժամանակ կոտորվում են շատ մեծ թուով ամեն տեղ, մանաւանդ տգէտ հասարակութեան մէջ, ապա ուրեմն և հայ գիւղերում: Պատճառը անկանոն, անբաւարար և դժուարամարս սնունդն է, որովհետև ծնողները իրանց խորին ազիտութեան պատճառով չգիտեն երեխայի սնունդ տալու եղանակը: Ինչ ճարվում է տալիս են մանուկներին, որոնց քնքոյշ ստամոքսը խանգարվում է և շատերը հէնց դրանից անժամանակ վախճանվում են, մանաւանդ ամառ ժամանակ: Իսկ մեծերի մէջ ստամոքսի և աղիքների հիւանդութեան պատճառը դժուարամարս սնունդն է: Երեխաների մահացութեան տոկոսը մի քանի երկրներում.

Նորվեգիա	104	} մահացութիւն հազարից
Շոտլանդիա	119	
Շվեյցիա	135	
Անգլիա	154	
Ֆրանսիա	173	
Պրուսիա	204	
Աւստրիա	251	
Ռուսաստան	310—600	

Մահացութեան մեծ տոկոսը ընկնում է ստամոքսի-աղիքային հիւանդութեան: Ընդհանրապէս պիտի ասած, որ նորածինների մահացութեան տոկոսը մեծ է լինում: Ըստ գերման վիճակագրի մը տարեկան 1,714,000 ծնունդներէն հարիւրին 39-ը առաջի տարին կ'մեռնին—այսինքն՝ 514,000 հոգի: Ֆրանսացի վիճակագիր Կեռօսոնի տեսլով՝ նորածին մանուկ մը աւելի նուազ հաւանականութիւն ունի տարի մը ապրելու, քան ութսունամեայ ծերունի մը... մեր երկրին մէջ ծնունդներու  $\frac{1}{5}$ -ը առաջի տարիին մէջ գերեզման կառաջնորդուի, մնացածի կէսը մեկկա 5 տարին\* )

Միզ մօտ չկայ ճիշտ վիճակագրութիւն, բայց անտարակոյս պիտի սպասել մեծ տոկոս մահացութիւն մանկանց հենց այն պատճառաւ, որ միզ մօտ յաճախ են տեղի ունենում վաղաժամ ամուսնութեան անչափահաս աղջկերանց, որոնց զաւակը չի կարող դիմացկան լինել: 1913 տարուայ Պետերբ. կայացած համառուսական առողջապ. կօնգրէսը տալիս է հետաքրքիր տեղեկութիւն

\* ) Մարդկային սերնդի ազնուացումը. Տօրթ. Չիլինկարեան. «Բժիշկ» ՁԻ, 1915:

«Երախայոց մահացութիւն ըստ դաւանութեան տալիս է հետևեալը՝

0—1 տարեկ. հասակը՝ 1900—1904 տարիքում	
1. Ուղղափառների մօտ	262,8 (1000 ծնուածներէց)
2. Հայ-Լուսաւորչ.	171,6
3. Բողոքական	161,1
4. Մահմետակ.	158,3
5. Կաթոլիկ	151,4
6. Հրէաների	115,8)*)

Եւրոպական Ռուսաստանում երեխաների մահացութիւնը նուազ է ուղղափառներից, որը բացատրվում է, ի միջի այլոց, նրանով, որ առաջինների մօտ մօր կաթով կերակրելը աւելի շատ է: Համաձայն ВУСК-ի վիճակագրութեան 1000 երեխաներից,

մօր ծծկերների մահը—	7,4—	այօրինների մօտ	
Ծծմօր կաթով	7,7	»	11
Կենդանիների կաթով	42,1	»	63,2
Զանազան կաթ և ուր-	125,1	»	128

բօգատներով. (Суррогаты)

Ըստ նորագոյն հետազոտութեան Ռուսաստանի քաղաքներում երեխայոց մահացութիւնը 2—3 անգամ աւելի է Եւրոպական և Ամերիկայի քաղաքների երեխաների մահացութիւնից.

Օրինակ՝	% մահացութեան 100 նորածնինը
Սարատով	37,1
Մոսկվա	33,1
Պետերբուրգ	26,1
Բերլին	16,1
Նիւեօրկ	12,5
Խիմ	12,2
Լճնդոն	10,5
Պարիզ	9,9
Ստօկհօլմ	9,1
Կօպինհագէն	9,0
Խրիստիանիա	8,2**)

Այդ ստատիստիկան վերաբերում է 1910 տ.

1913 տարուայ համառուսական ցուցահանդէսում երեխայոց մահացութեան մասին ահա ինչ ենք տեսնում. «Համայն Ռուսաստանում ուսաններից յետոյ գունաւոր քարտէզի վերայ երեխաների

\*) Всерос. гігiен. вист. С. Петерб. 7 Іюля—25 Сент. 1913 г.

\*\*\*) Др. Цедербаумъ. Состояніе народн. здр. въ Россіи Ежегодныя «Рѣчи»—1912 г.

մահացութեան դէպքերը հայերիս են բաժին ընկնում, իսկ յետոյ գալիս են մահմետականներ, հրէաներ, կաթօլիկներ, բողոքականներ և այլն Հայերիս մէջ շատ են մեռնում մինչև 5 տարեկան հասակի երեխաները»:

1912 թ. Ռուսաստանում ծնուել է 7 միլիօն երեխայ: Մանկաբարձուհիների թիւը հասել է 14,000: Միջին թուով եթէ ամեն մի մանկաբարձուհի տարեկան կարողանայ ընդունել 50 նորածին, այն ժամանակ կունենանք 700,000 երեխայ նրանց հսկողութեամբ, ծնուած, իսկ մնացեալ 6,300,000 տատմերների հսկողութեամբ որի հետեանքը Ռուսաստանի նորածինների սարսափելի կոտորածը (ի հարկէ կան և այլ հակաառողջապահական և սօցիալական պայմաններ). ցաւալի է մանաւանդ հայ իրականութիւնը, որ Ռուսաստ. համեմատական չափովն անգամ մանկաբարձուհիներ չունի: Այս քանի տարի ուր են գնում մեր գեղեցիկ սեռի ուսման և իդէալի սիրահարները: Ինչո՞ւ այդ գեղեցիկ ասպարէզի վրայ այնքան քիչ են երևում, մի ասպարէզ, որ թէ իդէալական է, և թէ ազատ ու ինքնուրոյն պրօֆէսիա և յամենայն դէպս ամեն տեսակ կամայականութիւններից և հայկական բզրգոցներից աւելի ազատ, քան ուսուցչութիւնը»:

Այստեղ պիտի մէկ քանի խօսք ասել արհեստական սննդատուութեան մասին երեխայոց:

Ստատիստիկան զոյց է տուել, որ Բերլինում արհեստական սննդատուութեամբ սնուցանող երեխաները 6 անգամ աւելի մահացութեան տոկոս են տալիս, քան բնական՝ կնոջ կաթով կերակրողները: Պարզ է, որ արհեստական սննդատուութիւնը համահաւասար է երեխայոց կոտորման: Պրոֆ. Բիտերդի պատմական հետազոտութիւնից երևում է, որ առաջներում արհեստական սննդատուութիւնը տեղի չի ունեցել Գերմանիայում. առաջի տեղեկութիւնը այդ հարցի մասին եղել 1500 տ.: «Բժ. Խրիստը, մէկը իմ աշակերտներից,— գրում է յիշեալ պրօֆ., որը բժշկութեամբ պտրապում է Տաճկաստանում, գրել է ինձ, որ տաճիկների, արաբների, հայերի և քրդերի մօտ արհեստական սննդատուութիւնը մահուկներին յայտնի չի: Եթէ կինը՝ յղիանում է, կամ նրա կուրծքը վնասուում է, նա տալիս է իւր մանուկին իւր դրացուհուն»\*\*) Վերոյիշեալ պրօֆ. գրում է իւր եզրակացութեան մէջ հետևեալը. «Եթէ հայրը արբեցող է, նրա դուստրը ստանում է անընդունա-

\*) Պետերբ. Համառուսական ցուցահանդէս. 1915 թ. յօդուած Ա. Գիւրչիան, Մշակ № 183, 24 օգոստոսի 1915 թ:

\*\*) Проф. Бунге. Искусственные кормление детей и ва-  
рождение перев. съ нѣмец. 1707 г.

կութիւն կերակրել իւր նորածնին իւր ստինքով, այդ անկարողութիւնը անցնում է սերնդին: Այդ արատին միանում են այլ այլասերութեաների երևոյթներ՝ նախատրամատրութիւն դէպի տուրբերկուօզը, ջղային հիւանդութիւններ, ատամների կերցաւ (ПОС-ПКСԾԵ): Այդ տեսակ ընտանիքներում ծնուած երեխաները, զուրկ լինելով մօր կաթից, լինում են անբաւարար աննդառութեան, և այլասեռումը տարածւում է սերնդից սերունդ մինչև որ վերջանում է ամբողջ սեռը մի ամբողջ շարք ծանր տառապանքներից յետոյ»: «Կան երկու միջոցներ այդ այլասեռման դէմ 1, հեռացնել պատճառները և 2, սեռական ընտրութիւն»: Յայտնի պրօֆ. գրում է, իբրև ջերմ կողմնակից սեռական ընտրութեան, որ աշխարհ բերել հիւանդոտ երեխաներ՝ ծանր ժառանգականութեամբ, յանցագործութիւն է թէ նրանց մօտ և թէ մարդկութեան» ի վերջոյ տալիս է յետագայ խորհուրդը՝

1, Պիտի պսակուել այնպիսի աղջկայ հետ, որը կերակրուել է իւր մօր կաթով:

2, Չպիտի պսակուել այն աղջկայ հետ, որը ունի տուրբերկուօզային, պսիխօզ և նեյրօպարիկ ժառանգականութիւն (ПСИХО И НЕВРОПАТИК. НАСЛЕДСТВЕННОСТЬ)

3, Չպիտի պսակուել արբեցողի աղջկայ հետ

Այդ պահանջները և աղջիկը պիտի ունենայ դէպի տղամարդը»:

Քանի որ ներկայ կրթութեան սիստեմը թոյլ չի տալիս աղջկան ծանօթացնել այն ամենի հետ, որ այնքան կարևոր է թէ իբրև տպակայ կնոջ և թէ մօր. հայ ծնողները պիտի առանձին ուշադրութիւն դարձնեն փեսացուի և նրա ընտանիքի անցեալի և փիզիքական առողջութեան վերայ:

Պրօֆ. Իունկէի փոքրիկ գրքոյկի բովանդակութեան եզրակացութիւնն այն է, որ տուրբերկուօզը, ալկօօլիզմը, պսիխօջղային հիւանդութիւնները՝ յարուցանում են կանանց մօտ անընդունակութիւն կերակրել իրանց երախաներին և դորանից ծագում է՝ սերնդէ՝ սերունդ առաջացող նոյն անկարողութիւնը և ի վերջոյ՝ այլասեռում և իսպառ ոչնչացնում սեռը:

Շարունակելի

բժ. Բ. Ալասարեան

### Գ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Զ Ա Յ Ն Ը

Գըլխին՝ փուշ-պըտակ, կըրծքին՝ ծանրը խաւշ,  
Դալուկ ծակատին՝ տանջանքի կընիք,  
Ահն՝ կանգնած է աշխարհի առաջ  
Մեր Մայրն ալեւոր՝ մեր քսողը Հայրենիք...